

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

* Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն *

Գ Բ Ա Վ Ա Ն . — Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն . — Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն
Կ Ի Թ Ա Վ Ա Ն Ե Ի Պ Ի Տ Ա Կ Ա Ն

1843-1896

Հ Ա Տ Ա Ր Ե Ի

Փ Ե Տ Բ Ո Ւ Ր

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Վ Ա Վ Ա Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

(Տես էջ 1)

Յ Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Պ Ա Ղ Ա Ք Մ Ե Ի Բ Ո Պ Ի Ո Յ



Պ Ի Ղ Ա Յ Ի սպազրութեանց, և այն նպատակաւ հետարացի խաչատուր վարդապետին ջանից վրայ խօսելու աւտն, յիւեցինք թէ աժգոհ և անբուական՝ իբ ձեռքով եղած արուեստին անկատարութիւնը տեսնելով, մտածեց անձինք զրկել յԵւրոպա՝ անոր ուսումնասիրութեան պարագելու, և անանկով յառաջընելու զայն Եիշատակագիրն, ինչպէս տեսանք, հասկըցուց մեզ, թէ այդ վախճանաւ՝ Յովհաննէս անուով վարդապետ մը կը շրջի յԵւրոպա՝ Թաւէնիէ գաղղիացի ծառիք ճանապարհորդին գրուածոց մէջ՝ նման յիշատակութեան մը կը հանդիպինք. Յովհաննէս Յակոբ. (Jean-Jacques) Չաւ-

ղայեցոյ մը, որ 1641ին մեքենական արուեստի մէջ իր արդէն աւելցած հմտութիւնը կատարելագործելու համար կը ճանապարհորդէ յԵւրոպա. ուր սպազրութեան արուեստին ալ տեղեկանալով՝ կը դառնայ ի Սպահան, և հոն սպազրատուն մը բանալով կը հրատարակէ Պօզոսի Թղթբը. Թաւէնիէ կ'ըսէ թէ արքունի ատաղձադրծաց գլխաւորն էր նա. Chef des menuisiers du roi des Perses). Չենք գիտեր թէ գաղղիացոյն յիշատակած այս անձը՝ նոյն է ընդ Յովհաննաւ. յու. յղելոյ ի խաչատուր. Ժամանակն և նպատակի նմանութիւն՝ հաւանակամարար կը լուին նոյնացընել, Արդ սա այս Յովհաննէս վարդապետ կը

ըրջի ընդ Եւրոպայ, կամ մանաւանդ ընդ իս-
տալիա. կ'անցնի ի վենետիկ և ի Հռոմ, և
սակ ի Լիւթուոյ. և ըստ կարի հմանաւորով
արուեստին՝ այս վերջի քաղաքին մէջ, Սաղ-
մոսաց զիւրք մը կը հրատարակէ, փոքրազիւր
հատոր մը, այսպիսի ճակատ գնելով. « Գիրք
և Սաղմոսք Դաւթի, որ և Սաղմոսարան
կոչի: Տպագրեալ եղև ի հայրապետութեան
Հայոց Տէր Փիլիպոսի Սրբազան կաթուղի-
կոսի. Հրամանաւ և կամօք երջանիկ խաչա-
տուր վարդապետին կենարացոյ. Չեռամբ և
Հոգացողութեամբ Նուաստ Յովհաննէս վար-
դապետի Ջուղացոյ, յիւրում տպարանի, զոր
կայացոյց յիտալիա: Ի վայելուչ Քաղաքն
ևւ ի նաւահանգիստն ի Լիւթուոյ. Ի ԹՎ.
ՌՂԿ. Յօժարութեամբ վերակացուաց »: Այս
ճակատ տպագրուած է կարմրաներկ և սեւա-
տառիւք: Անմիջապէս ի միւս էջն յետ ճա-
կատուն՝ սափորածէ զարդ մը կարմրաներկ,
և ի վերայ՝ օպիտակագոյն երկաթազիւր տա-
ռիւք, « Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհան-
նէս Ջուղացի. շնորհքն Աստուծոյ վարդա-
պետ և օպտորար սուրբ Աշխածին որ ի
ԹՎ. ՌՁԸ »: Իսկ ի հանդիպոյ, Առ երջա-
նիկ Տէրն իմ՝ Տէր խաչատուր բարունեաց
Պետան. Ի նուաստ Յովհաննիսէ Ջուղացո
Բանի Սպասաւորէ:

Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ
Հօրք իմոյ մեծի և երջանկագունի, և Նա-
խախնամութեամբ Տեառն որ ի ԹՎ. ՌՁևԸ
բաժանեալ ի սուրբ ուխտէդ, դիմեցի յարև-
մուտս սակա լրութեան տպագրութեանս. և ի
սպառուածս ամի միոյ, որ ընդ ծով և ընդ
ցամաք, հասի յիտալիա, ի գեղազարդ քա-
ղաքն ի վենետիկ. և վերահասու երեալ
գործառնութեանցս, ընթացայ ի Հռոմ. և
անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տպոց.
և աւարտեալ մասն ինչ ի գործոցս՝ առի զար-
հետաւորս և դիմեցի ի Լիւթուոյ. և անդ
զտեղի կայեալ՝ մեծաւ ջանիւ և բարի դի-
տաւորութեամբ, զտիւ և զիշեր անվաղար աշ-
խատելով՝ լրումն տուաք տպագրութեանս.
յերկարելով յաշխատութիւնս՝ բաց ի ճանա-
պարհէն, Գ ամ և Գ ամիս, անմխիթար
յամենայն կողմանց: Եւ շնորհօք ամենա-
գօրին Աստուծոյ, և աղօթիւք տեսնող իմոյ

աւարտեցաք զտպագրութիւնս անթերի և ան-
պակաս կատարելութեամբ. որք են տխրք զա-
նագանք՝ ըստ գանազան որակութեան և քա-
նակութեան, մեծք և փոքրք՝ ութիւրք որո-
շեալք, ընդ որոց է և նիւթ երգոց և շա-
բականաց. և այլ գործիք բազումք զարդա-
րիչք տպագրութեանս. որով ամենայն ինչ
կարելի է տպիլ. յորոց իբր միջին կերպ է
այս, զոր սեսանէ Տէրդ իմ ի ներկայս,
զոր իբրև զպտուղ հնազանդութեան՝ մատու-
ցանեմ Տեսանց իմոյ գերախայրի գործոցս.
որով կարիցէ տէրդ իմ ճանաչել զկատարե-
լութիւն գործոցս՝ և զհաւատարմութիւն ծա-
ռայի քոյ. զի ոչ կորուսաք զժամանակն մեր
ունայնաբար, որպէս կարծեն այլք: Իսկ վասն
սակասութեանցն ներեալ երկարամտութեամբ.
զի իբրև զփորձ տպեցաք զսա յոյժ շտապ-
մամբ, վասն անմխիթար ներլութեանցս. զի
յաւուրս Չ աւարտեցաք զսա Ռ. և Ծ հա-
թուով ի միասին, միայն և տանց ուրուք
ձեռնատուէ: Վասն որոյ ընդունելի լիցին
տեսնող իմոյ, վաստակ ծառայի քոյ, իբրև
գնուէր անձնատուէր. վասն զի մտեալ որ-
պէս ի պատերազմ, իբրև արեւոյս ստացայ
զսա: Ողջ լեր: Ի Լիւթուոյ, ԹՎ. ՌՂԿ.
մայիս Ժ: Իսկ ի վերջ տաղմտարանին՝ միւս
այլ սափորածէ զարդ, և վրան գրուած սե-
ւաներկ բոլորագրով. « Շնորհօք ամենագօրին
Աստուծոյ արդ կայացաւ տպագրութիւնս: Չե-
ռամբ Յովհաննէս վարդապետին »:

Այլ ընդարձակ յիշատակարան պատմա-
կան. « Առ բարեպաշտաւոր անձինսոյ ըն-
թերցողաց, վասն մշտնջենաւոր յիշատակի.
Շնորհօք ամենագօրին Աստուծոյ և նախա-
խնամութեամբ տեսան մերոյ և փրկչին Յի-
սուսի Քրիստոսի ի ԹՎին ՌՁ և Ը ի դեկ-
տեմբերի ամնոյ ի մէկն. Ես նուաստ ծառայ
Յիսուսի Քրիստոսի Յովհաննէս Ջուղացի՝
Սպասաւոր բանի. Հրամանաւ երջանիկ հո-
գևոր հօրն իմոյ խաչատուր վարդապետին
կենարացոյ. Ելեալ ի Սպարհանու դիմեցի
յարևմուտս յերկիրն Իտալացոյ՝ սակա լրումն
և կատարելութեան գործոյ տպագրութեանս.
զոր արդէն եւս ձեռնարկեալ էաք: Չի ի
սպառուածս տարւոյ միոյ հասեալ ի պայծառ
և ի գեղազարդ փաղտքն և Նաւահանգիստն

ի վեհնետիկ, ուր բնթողեալ ի սպարանս
 ցրոց բազում ջանիւք հոգ սարեալ վերահա-
 սու եղէ արծառնութեանս. և վասն առա-
 ւել պակասութեան մերոյ սպագրութեան, ի
 մտի եզի ե խորհեցայ նորագոյն գերք և տիպք
 կայացուցանել, որպէս զի ևս գեղեցիկագոյնք
 լիցին գործք սպագրութեան մերոյ: Այլ զի
 ի վեհնետիկ ոչ գոյին արհեստաւորք պատ-
 շանք այսմ գործոյ, գիմեցի ի Հոտմ: ուր
 սկիզբն արարաք գործառնութեանս. և մասն
 ինչ ի գործոյս անպ ի Հոտմ աւարտեցաք:
 Եւ ապա անախ ընթացաք ի վայելուչ նա-
 ւահանպիստն ի Ղիստեայ. ընդ մեզ ամելով
 և զարհեստաւորս. ուր զետեղեալք բազում
 ջանիւք և հարցողութեամբ զուս գործեալ ա-
 ւարտեցաք յառաջարկեալ գործառնութիւնն
 մեր, ի ցայլ է ի ցորեկ մահու շափ աշխա-
 տելով՝ միայն և առանց տուրք օգնականի յեր-
 կարելով յաշխատութիւնս Գ ամ և հինգ
 ամիս ողջոյն. Բաց ի մի ամոյն զոր անցու-
 ցաք ի ճանապարհին. զանց առնելով զվիշտս
 և զստուսպանս՝ զոր յայցանս ժամանակս կրե-
 ցաք ի հակառակասիրացն, և յոչ կամողացն
 զբարեգոյն գործս. որք փոխանակ օժանդա-
 կութեանն՝ զոր պարտէին, զմաբանեալ
 հակառակէին մշտաբար, բանիւք, գործողք և
 արդեամբք. և զառաջարկեալ արծն մեր իս-
 փանել ջանային: Մակայն Աստուածն ամե-
 նահայեաց՝ ոչ հաճեցաւ ի խորհուրդս նա-
 ցա և ոչ արար ըստ կամաց նոցա, այլ
 օգնեաց ինձ աջողմամբ՝ միշտ և ամենայն
 ուրեք, տալով շնորհս առաջի ամենեցուն. և
 մեր եւս ոչ զագարէաք և ոչ թուլանայաք ի
 գործառնութեանցս. և ոչ ինչ էր փոյթ
 մեզ հակառակութիւնք նոցա, վասն յուսոյն
 իմոյ որ առ Աստուած. այլ ապաւինեալ ի
 զօրութիւնս տեառն ի կատարումն գործոյս
 հասանել փութայի, յիշելով զբան Պողոսի որ
 առէ. Եթէ աստուած ի մեր կոյս իցէ, Ե՛վ
 իցէ մեզ հակառակ. որպէս և եղևն իսկ:
 Եւ շնորհոք ամենազօրին Աստուծոյ, և ձեռն-
 ստութեամբ վաճառականաց սմանց բա-
 րեպաշախց, աւարտեալ կատարեցաք զյառաջ-
 արկեալ գործ սպագրութեանս անթերի և
 յոյժ կատարեալ, քանակութեամբ և որա-
 կութեամբ՝ զանագանեալ. յորոց մինն և իբր

միջին կերպ է այս զոր տեսանէք յառաջի-
 կայլ: Չոր յազագս տեսութեան և փորձա-
 նութեան գործոյս սպեցաք զսաղմոսարանս և
 աւարտեցաք զսա յամին որ ի ծննդեմնէն Քրիս-
 տոսի ՌՈ և Գ. ի հայրապետութեան Հայոց
 Տէր փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի. և
 ի թագաւորութեան Պարսից փոքր Շահ Ա-
 պասին նորընծայ թագաւորին. և ի թվին
 որ ըստ Հայոց ՌՂ և Գ. ի մայիսի ամսոյ
 ի տասն, ի Լիվոնոյ. ի յիշատակ մշտնջե-
 նաւոր և ի փառս Քրիստոսի: — Արդ եթէ
 հանդ թուեցի բարեպաշտութեան ձերում,
 շնորհք Տեսնէ է, զՏեսնէ՞ զհրացարուք. և
 եթէ ոչ՝ ներեցէք իմում տկարութեանս, և
 երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս.
 զի իբրև փորձ տպեցաք զսա անհոգաբար
 և յոյժ ըլլապամբ քակա բազում ներութեանց
 և անմիտութեանց, զոր կրէի միշտ վասն
 միայնութեան և պանպիստութեան իմոյ: —
 վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեանս որ
 հանդ(իպ)էք սմա, ստանալով զսա, յիշեալիք
 ի մաքրափայլ յաղօթն ձեր, զվերոյսացեալ
 զերջանիկ վիսաշատուր վարդապետն. և զձեռն-
 ստու բարեպաշտաւոր վաճառականսն, և զիս
 դնուստ զՅովհաննէս Չուղացի սպասաւոր բա-
 նի, որ բազում աշխատոսնոր յայտարերեցի
 զսիպս և զսպագրութիւնս. և զբարեպաշտ
 ծնողս իմ, զհայրն իմ զհանգուցեալ մահ-
 դասի Էզիզարն, և զմայրն իմ զԱննա Է-
 լիքն. և զամենայն արեան մերձաւորս իմ
 գհոգեւորս և զմարմնաւորս. զկենդանիս և գհան-
 դուցեայս. որպէս զի և զուք յիշեալ լիջիք
 ի փրիստոտ Աստուծոյ մերոյ, որ է աբհնեալ
 յաւիտեանս. ամէն: Հայր մեր: վերջն է
 գրոյս » :

Այս յիշատակարաններն իրենց ամբողջու-
 թեամբ մէջ բերելուս պատճառն յայտնի է.
 այլևայլ հանգամանք իրաց կը նշանակուին
 անոնց մէջ որ ազգային սպագրական պատ-
 մութեան տեսակետով ունին իրենց հետաքրք-
 րական կարևորութիւնը: Դախ, թէ որչափ
 զժուարին եղած է Յովհաննոս՝ իրեն յանձ-
 նուած գործը ի կատար հասցրնել. և թէ
 քանի՞ զժուարութեանց և հակառակութեանց
 հանդիպեր է, որոց՝ ինչպէս ինքն կը հա-
 մարի, յաջողեր է յաղթել. թէպէտ և ար-

գիւնքն զայն չի ցուցըներ. սրովհետեւ և այն, շափ իրարմէ զանազանեալ տառեր և կաղապարք շինել տուեր է շատ ծախքով, և միայն մէկ տեսակը իր վարդապետին և ընծիհրցուցաց կը ներկայացընէ, առ ի հաւատարիմ առնել, ինչպէս կ'ըսէ, թէ այլոց կնխմարածին կամ կասկածանաց համեմատ ժամանակը անծագաւ կերպով վատնած չէ. ուր մեզ անծանօթ կը քննայ թէ այնչափ ծախք և կազմած ինչ բանի ծառայեր են, ինչ եղեր են այն տառերն և կաղապարք. որովհետեւ սազմոտարանով կը լռէ նաև Յովհաննու Չուզայեցոյ տպագրական գործունէութիւնը և անունը. և հասած չէ առ մեզ յիշատակ մը թէ այնչափ ինձամօք յերկրուած և յղկուած առաջ զրկուեցան առ խաչատուր վարդապետ, և թէ անհետացան, ուսումնասէր առաջարկողին և գործակցին աշխատանաց առջև նիւթական և բարդական արգելք ելլելով: Քառուցն և աւելի տարիներէն ետքը, 1681ին կը սկսին միւսանգամ հրատարակութիւնք գրող յԱմենափրկիչ վանու Չուզայի, ինչպէս աստիճանին պիտի առնենք, բայց ոչ Յովհաննու վարդապետին տառերով և արձեստով: Մեծապէս արդիւնաւոր է նա և անմտաց յիշատակութեան արժանաւոր իր անունը, ոչ լոկ բազմաբէրուն և բազմամաստակ ջանից պատճառաւ, այլ և արտադրած երկին՝ մատենին արձեստական ազնուութեամբ, անյութար և գրեթէ անսխալ տպագրութեամբ, հանդատեսիլ ձեւովք տառից, մարքութեամբ և ընտրութեամբ ուրիշ ամէն հանգամանաց թղթոյ, պատկերաց և զարդօց:

* *

1675ին Էդեմայ Գալանոսի երկասիրութեամբ՝ գիրք մի կը հրատարակուի ի Հռոմ մ' հայ և լատին լեզուով ի տպարանի Հաւատաստիւս ժողովոյն: Ծանօթ է բանասիրաց որ թէտպինեան ուխտէն իտալացի հայերէննազգաւ կրօնաւոր մ' էր Գալանոս ի Սորբենոյ քաղաքէ նկատուեան գաւառաց, և երկար տարիներ տաքէլական քարոզչի առնումբ և պաշտամբ շրջած յարեւելս և առանձին ի Հայաստան: Այդ երկար ազնուութեանց և ծանօթութեանց, զոր քիչ

շատ ստացեր էր, արդիւնք են իր քանի մը գրուածներն մեր լեզուին և ազգին նկատմամբ, և որոց մէջ ի կարգի տպագրութեան յաւանքն է հետեւեալ խորագիրն կրող գիրքը. Գերական և Տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ. Grammaticæ et Logicæ Institutiones Linguae Litteralis Armenicæ Armenis traditæ a D. Clementi Galano, զոր հայ և լատին ընծայականաւ կը նուիրէ Յովհաննէս վարդապետ Էդեսացի՝ արքեպիսկոպոսն Միջագետաց առ Նախագահ ժիրանաւոր սրբոյ Ժողովոյն: Եղնպէս հայ և լատին լեզուով վկայութիւն կու տան գրքին կարեւորութեան խաչատուր պատրիարք Հայոց Կաստանդուպոլսի, Պօղոս եպիսկոպոս Տելիսիկոյ, և Նիկոլ եպիսկոպոս Թորոսովիչ, միայն ի լատին տուեալ ի Հռոմէ ի Թուին Հայոց 1092, Տարածման հաւատոյ ժողովոյն տպարանին մէջ արդէն ի գործածութեան հնան և խոշոր տառիք տպագրութիւն մ' է, ինչպէս հինգ տարի ետքը և շարունակաբար հետեւեալ տարիներու մէջ ի նմին տպարանի և նոյն հեղինակին երկասիրած Միաբանութեան գրոց հայ և լատին երեք հատորք, և փոքրագիր հատոր մ' ալ միայն պատմական մասին նոյն գրոց:

Մենք հոս տպագրութեան պատմութեան առթիւ յիշեցինք այս գրուածքներն. մատենագրական տեսակիտով ուրիշ գրուածքի մէջ կ'ըլլայ անոնց յիշատակութիւն, ինչպէս նաև հեղինակին վարուց պատմութիւնը և ազգայնաց հետ վերաբերութիւնք, որ բաւական հետաքննականք են:

* *

1660 թուականին Յիսուս արդի գրոց տպագրութիւն մը կը գտնենք ի վենետիկ, իսպաղանոյ մը ձեռքով, որ նոյն ժամանակին քաղաքին մէջ գտնուող հայ գաղթականութեան ծանօթ և մտերիմ կ'երևնայ:

Արդէն տասնեօթին տարի յառաջադն, ինչպէս յիշեցինք վերագոյն, նոյն գրոց տպագրութիւն մի հրատարակուած էր ի վենետիկ, Յովհաննու Անիւրացոյ ձեռքով: Ազգին ընդհանրութեան ձանձօթ և սիրելի պիտը

մի, կ'երևնայ թէ քիչ ատենի մէջ սպառե-
լով, կրկին տաջաբեր է զայն Պոլիս ոմն խոս-
լացի, Անկիրացոյն տպագրին վրայ, հե-
տեւելով նմա յամենայնի, և ի նոյն իսկ շա-
րագրութեան յիշատակարանին: Ի սկիզբն
զոյն՝ դրուած է պատկեր մը, և որ ճա-
կասի տեղ ալ կը ծառայէ: Չունի բաց ի
զբքին վերջը դրուած յիշատակարանէ՝ զոր
մէջ պիտի բերենք, ուրիշ յիշատակարան.
պատկեր մի միայն Յիսուսի, որ ունի ի ձե-
ռին զգունս աշխարհի, և ուրիշ մ'ալ ի
մէջ գրոցն՝ վեղարաւոր վարդապետ մի
յամայնոնի քարոզելով, և ազգային տարազու
զգեստուորուած խուռն աւնկնդիրք: Իսկ ի
վախճանի հետեւեալ յիշատակարանը, կամ
'ինչպէս ինքն հրատարակողն կ'ըսէ օ ծա-
նուցում՝ պայծառ ընթերցողացս. փոքր...
որ ետ կարողութիւն նուազս և քառասուն
անձին իմոյ ճուան Պատիսոյ՝ որ մակա-
նուամբ ասի Պոլիս, սր եմ ազգաւ լատինացի
ի դեղեցկաշէն մայրաքաղաքէն վանատիոյ,
Չոր բազում ջանիւք և աշխատանք հազիւ
կարացի ի յանկ հանել զսպագրութեան
արուեստն, Եւ ոչ ուստեք եղև ինձ օգնու-
թիւն այսմ սպագրութեան արուեստիս այ-
սորիկ: Ապաւինելով ի յայն ամենեցուն ֆրիս-
տոս. և ի շնորհաբաշխ Հոգին սուրբ Աստուած.
բարեխօսութեամբ սրբոյն Աստուածածնին. և
ազօթիւք սրբոյն Գրիգորի լուսուորչին. և
բարեխօսութեամբ ընտրեալ անօթոցն և ա-
ռաքելոցն Պետրոսի և Պօղոսի եղի ի մտի
զսպագրութեան արեստն առ ի պայծառու-
թիւն ազգին Հայոց: Այլ և պատճառ աշ-
խատանաց մերոց այս էր. սր բազում ծա-
մանակաւ յառաջ ունէի սէր և բարեկամու-
թիւն ընդ ազգին Հայոց. և յարածամ ցտն-
կայի տեսանել զչքեղաշուք իշխանն հայոց
խոնա Սաֆրազն. Չոր ոչ կարացի հասանել
ցանկութեան իմոյ. զոր փոխեալ է առ Աս-
տուած. և զնորհառ որդին իւր զնոնայ վաթ-
րանն տէր Աստուած ընդ երկայն առաքա ա-
րացէ. Չոր և պարզևատուն ամենեցուն
ֆրիստոս պարզեւեաց ի ձեռին իմոյ զայս-
չպին, առ ի պայծառութիւն տանն Հայոց.
Այլ և խնդրեմ ամենեղադիր լինել սպիս ան-
յարմարութեան. քանզի ամենեկին ոչ գիտէի

լեզու հայոց, և կամ գիր. և ոչ տեսեալ ի
վարպետաց զայս սպագրութեան արհեստն.
բոտ պարզեւելոյն սմա ի Հոսոյն Սրբոյ այս-
քան յայտ ածեալ երևեցուցի վասն օգտու-
թեան ազգին Հայոց զոր և հասի յաւարտ
բոս ձերում աղօթիւք. Եւ եթէ նուազու-
թիւն գտանէք՝ ներեցէք իմում պակասու-
թեանս, զի կար մեր այս էր. Արտ եղև կա-
տարումն և աւարտումն երգոցս տեսան Ներ-
սեսի Հայոց կաթուղիկոսի զոր անուանեալ
կոչի Յիսուս որդի, ի լաւ և յըմտիր օրինա-
կէ բազում քննութեամբ և ստուգաբանելով.
Ի թուականութեան Հայոց ՌՃ և թի թ յամ-
սեանն մայիսի... ի հայրապետութեան
Հայոց համուրց սեռի Տեսուն Յակոբայ և
րիցս երանեալ երջանիկ հայրապետի ի վայն-
լուչ եւ ի գեղեցկաշէն կղզիս վանատիոյ.
Եւ յիշխանութեան նոյն քաղաքի Տօմենի-
կոյ Գոնդարբինի Դուռի և մեծամեծաց հրա-
մանաւ և բրիլիլէնով: Դարձեալ աղայեմ
զձեզ որք հանդիպէք սմա կարգալով և կամ
տեսանելով յիշեցէք ի ֆրիստոս և մեղաց
թողութիւն ինչերեցէք ինձ ճուան Պաղիսոս
Պոլիսիս և ծնողացն իմոց. և դեռաբոյս զա-
սակացն իմոց և այլ ամենայն մերձաւորացն
իմոց. և զուք յիշեալ լիլիք ի ֆրիստոսէ Աս-
տուծոյ ամէն: Դարձեալ յիշեցէք ի քրիս-
տոս յուղանիցի տէր Ստեփանոսի որդի Եւ-
ղուպ աղան որ նա եւս աշխատեցաւ ի օրբա-
զրելն օրսւ: Դարձեալ յիշեցէք ի ֆրիստոս
զնորհաս մանուկն Ստեփանոս օր. է ազ-
գաւ հայ որ շատ աշխատեցաւ. և օգնութիւն
արար այս արհեստիս ի սրագրելն և ի շարեւն
և այլ ամենայն որպիսութեան սորա. միթէ
տէր Աստուած զինքն անփորձ պահեցէ ա-
մենայն շարէ. ամէն: Կատարեցաւ զիրք Բ.
նախ Յիսուս որդի և ապա Սաղմոս ՚ի տպա-
գրատան Պօլիսիս »: Իսկ ի միւս էջն՝ կնքա-
նշան սպագրողին. եզն մը, աղեղն և երեք
աստեղանշանք:

Ինչպէս ի յիշատակարանիս կը նշանակուի,
Պոլիս Սաղմոսարան մ'ալ հրատարակեց
նոյն 1666 թուականին թ նոյն յիւրում
սպագրանի, այս խորագրով. « Գիրք եւ Սաղ-
մոս որ և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ
եղև ի գեղեցկաշէն մայրաքաղաքն վանատիկ

ի սունն Պօլիսին. ի թուականութեան Հայոց մեծաց Ռճ և Թ » . և յետոյ ունի յիշատակարան նման ըստ բանիցն և շարագութեան նախընթացին . ուստի և աւելորդ յտռայ բերել : Միայն ի վերջոյ կը յաւելու յիշել և « թոխաթեցի Ղատապաղայեանց Սահակ երէցն որ զօրինակն հետուր , և ի սրբազրեչն շատ աշխատեցաւ . միթէ վարձահատոյցն ամենեցուն ֆրիստոս տացէ զփոխարէնն իւրոց աշխատանացն . ամէն . » կը յիշուի դարձեալ . « Այլ և օրինակ սորա քննած և ստուգաբանած է ի բազում վարդապետաց . որոց զուլս է աւաներջանիկ կեսարացի խաչատուր քաջ բարունակեան , որ էր վերատեսուչ քաղաքին Ջուղայոյ . և պետաց պետն Սիմէօն , որը են հանգուցեալ առ ֆրիստոս . Միթէ Տէր Աստուած զհրեանցն ընդ երկոռասան սուրբ վարդապետացն և առաջին սուրբ հայրապետացն զատակիցս արտացէ . ամէն : Այդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում , շնորհ տեսան է և զտեսանէ զոհացարուք . Եւ եթէ ոչ ներեցէք մերում անարժանութեանս . եւ երկայնամիտ լիւրուք . զի կարն մեր այսքան էր . վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեանսզ որը հանդիպիք սմա ստանալով , յիշեալիք ի մաքրափայլ աղօթոյ ձեր , և վայելելով զսա՝ զվերայասացեալ Սահակ երէցն , և զՍտեփանոս որ բազում աշխատանօք յայտաբերեցաք զայսքան . առ ի պայծառութիւն ազգիս մերոյ Հայոց : Տպագրեալ եղեւ ի սունն Պօլիսին . վերջ » :

* *

Տասնութ տարուան ընդհատութիւն մի կը տեսնուի վենետական հայ տպագրութեանց (1660—1678) , յետոյ միևնույնամ սկզբնաւորելու համար : Այս ժամանակաւոր դադարման ատենն է՝ յորում ազգային տպագրական արուեստ կը սկսի և կը բարգաւաճի յԱմսդերտամ Հօլանտիոյ :

Վասն զի 1660 թուին Յիսուս որդի զրոց Շնորհալոյ երրորդ տպագրութիւն մի կ'ըլլայ յԱմսդերտամ , նախընծայ արդատիք հոն հաստատուած հայ տպագրատան և

Թակոք կաթուղիկոս Էլմիածնի՝ իւր նախընթացից նման ուսումնասէր անձն , անոնց

օրինակին ալ հետևող կը յանձնարարէ նախորդ փլիխպոս հայրապետի նօտար՝ Մատթէի Ծարեցոյ , որ յԵւրոպա անցնելով՝ ջանադիր ըլլայ այդ բազմօգուտ արուեստին հմանալ և հոն այլևայլ գրքեր հրատարակելու աշխատիլ . Մատթէոս Հայոց ՌճԵ (1656) թուականին կ'ելլէ ի Ջմիւռնիոյ , և քառասուն օր ճանապարհորդելով ընդ ծով կը հասնի « ի գեղապարզ քաղաքն և ի նաւահանգիստն ի Վենետիկ » : Տեսանք արդէն նախընթացարար որ վենետիկ քաղաքին մէջ եղան , և զիս եւս կ'ըլլային հայկական տպագրութիւնք . և նոյն իսկ 1660 տարուոյն մէջ , Մատթէոսի հոն ժամանելէն քանի մի տարի յետոյ , Շնորհալոյ Յիսուս որդի գիրքը հրատարակուեցաւ : Բայց Ծարեցի կ'ըսէ , որ « բնութացեալ ի տպարանս զրոց բազում ջանիւր հոգ տարեալ . վերահասու եղէ գործանունութեանս . և զի ի վենետիկ ոչ զոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ » . ուստի բռնադատեցաւ անկէ մեկնիլ . և որովհետև սաստիկ համաճարակ մահ կայր յայնմ ամի ի Հոռով և այն պատճառաւ ճանապարհորդացուած էին , ստիպուեցաւ տասնուչորս ամիս ուշանալ ի վենետիկ , իսկ երբ մահը դպրելով՝ երթեկեց ալ զիւրացան , Մատթէոս գնաց ի Հոռով . բայց հոն ալ շյաջողեցաւ գտնել փնտռած ճարտար արուեստագէտքը . մանաւանդ որ ոմանք « բարեատեսցը և հակառակասէրք զրգուեցին զմեծամեծս և զժողովս առ ի խաբանել զայս գործ » : Եւ այնչափ զօրացան իրենց այս ընդդիմամարտութեան մէջ , որ հրաման հանել տուին թէ ոչ որ յարհեստաւորաց քաղաքին « իշխեսցէ հանել զայս արհեստ և ալ ի ձեռս Հայոց . և որը անտրջնեալ արասցեն զայս գործ՝ ծածուկ և կամ յայտնի , պատիժ սաստիկ կրելոց են ի մէնջ եւս կամէին ահապուցանել » : Բայց Ծարեցին կ'ըսէ , թէ հոգեբնիս չէր այս իրենց որոտմունք . որ սեթ ամիս զեգբերելով բնակութեամբ , աղերսական խնդիրը իմացոյց ծիրանաւորաց ժողովոյն ու նաեւ քահանայապետին . սակայն չկրցաւ յաշողիլ վասն որոյ գնաց յԱմսդերտամ Հօլանտիոյ , ուր գտաւ ուզած վարպետ արուեստաւորքը , ու զիշեր և ցերեկ աշխատելով չօրս տարի

և նոյնպիսի ամիս, ու շատ նեղութիւնք և հակառակութիւններ կրելով, և ինչպէս զանազատանաց սահմանէն ալ անպիսն անցնելով կ'ըսէ. « մանաւանդ մերային չազանց ՚ի սուտաձեւ կարգաւորաց և յաշխարհականաց թէ ի վնէսիկ և թէ աստ ի Մատթամ, որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտն էին՝ դիմաբանեալ հակառակէին մշտաբար » : Աստուր խօսքով, զործով և արդեամբք կ'ուզէին խափանել իր օգտակար ձեռնարկը . և եթէ յօտարազգաց բարեպաշտք ոմանք իրեն օգնութիւն մտ ուզենային մատուցանել օ գայն եւս յուսահատեցուցանէին և ապաշահել տային բարձրործութեանն » : Սակայն յայլոց պտած ձեռնառութեամբ քջալիբուռելով Երանցին, յազգայնոց տեսած հակառակութիւնը կ'արհամարհէր . որով և զօրացած, երեք տեսակք տառից յաշողեցաւ տալ շինել . յորոց միջին և կամ երկրորդ տեսակաւ ձեռք դարկաւ սպազրել զՅիսուս որդի, յամի 1660, « իշխանութեան քաղաքին նորընձա փոխնչիպային վիչկալով Օրանոյ » : Յոյժ սխալագիր տպագրութիւն մ' է այս, թեպէտ և վայելուչ ըստ ձևոյ տառիցն, և մանաւանդ ըստ բազմաթիւ պատկերաց, որ աւնուանի վասն Սիբէմ փորագրողի զօրծերն են, ինչպէս կը տեսնուի փակագրէ մը որ ամէն պատկերաց ներքեւ դրուած է : Տպագրութեան այս անհարթութեան տեղեակ է և հրատարակիչն, ուստի և կը խնդրէ « ներել պակասութեան զրոցս, զի օրինակն մի էր և շարողք Քրանկը ոչ են տեղեակք զրոց մերոց և լեզւաց . և ես միայն և տկար զուով կու սրբագրէի հազիւ այսքան կարի ստէպ » :

Մատթէի ծնողքն էին հանգուցեալ ծարեցի Աւագ ու մայրն Պէկիկիան . եղբարքն Ղարիպիան, Վարդան, Պալասան, Մանկասար, Հաննազար . ինք ալ արուեստիւ ծաղկոց և նկարիչ : Երբ զրքին շարումն հասաւ 38 թերթին և տպագրեցան 28ն, նոտար Մատթէոս վախճանեցաւ ի թուին ՌՃԺ ի 22 յունուարի . կենդանութեան աւտեն պատրաստելով զրքին վերջը դրուելիք յիշատակարանն, և տեղնիտեղը պատմելով այս տպագրական գործոյն համար իր գլխէն

ամեն անցածները : Նոյն ժամանակին յԱմբսգերտամ զանուեցաւ Ռսկան վարդապետի Երեւանեցոյ Աւետիս եղբայրն, որ և Երարեցոյն ընկերն էր ի տպագրութիւնս զրոց, և շահակից անոնց վաճառմանէ յառաջ եկած արդեանց : Մահուընէն ետքը Մատթէի յիշատակարանը կը լրացընէ Աւետիս . « Ես, կ'ըսէ, երիւանեցի Ղըրջիցն Ռսկան վարդապետի եղբայր Աւետիսս որ յենկեր ի նորոտ դրամով այլ օգնութեամբ, աստուած ինչ (ինչ) որ վաստակ տայ մեր մէջն վաստակն կիսոյ լինի . որ ժամ որ մեռուաւ ես իբրև որր ստառկուեալ և պարտալ մընաձի ես և սահմանք և զորձն և մշակն . ամիս ժամանակ անցաւ սկանն նուերն գնալ ի դէմ արեւելս ի քաղաքն Չըմբուայ աթոռն սուրբ Պողիկարպոսի որ է յօթմանանիցն . անճարութեանն մնացեալ ԺԳ տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի . օրինակն ետի մի կողմ տպայգրածն մի կողմ . մին կու նայի օրինակն մի ի տպայգրածն . յորժամ որ սղալ լինէր կու մեկնի այսպէս սրբագրեցի . մընացալ ԺԳ տետրն . ապայ ուսայ ըզսրբագրելն որ տուրին է . թիւ ՌՃԺ մարտ աս . մին ի Ե Սուրբ Աստուածածինն միչնորդ ունելով » :

Աւետիս կը գրէ յիշատակարանս, անկեղծութեամբ խոստովանելով թէ իր անուըն գնելու պատճառ կամ արժանաւորութիւն մը չուներ . բայց հարկ սեպեց, որովհետև շատ աշխատանք ուներ գործոյն վրայ թէ դրամով և թէ ուրիշ օգնութեամբ . որովհետև ուխտ դրեր եմ ցմահ աշխատիլ ըստ կարողութեանս վասն Էջմիածնի և ատենահաս սրբոյն Սարգսի . անանկ որ « եթէ ես չըլլայի, կ'ըսէ, չեմ դիտեր թէ Երարեցոյն մահուընէն ետքը ո՞վ պիտի տիրանար գործարանին . որովհետև թողած պարաքը հազար մտալիլ էր՝ մինչ տպարանին գոյք՝ այդ գումարին կէսը չէին արժէր : Ասկէ վերջը Աստուածաշնչի տպագրութեան գրերը պիտի դուրս գան . տիրացուն (Մատթէոս) որ մեռաւ՝ դեռ քառասուն կամ վաթսուն գիր փորուած չէր . ասկաւն երկու հարիւր քսան զրոց մարք պիտի փորագրուին, վարձքը տուողն եւ եմ, և մինչ ի խաչվերաց, եթէ արուեստաւոր չի մեռնի,

ամենայն տարից փորագրութիւնը պիտի աւարտին և դուրս դան » :

Ասկէ վերջ կը յանձնէ յիշել զինքն և իւր հանգուցեալ կողակիցն զՄարտիմ տասան, զհայրն թորոս, զմայրն Գուհարազիզ, զեղբարսն՝ զԱւագ, զՍիսկան վարդապետ, և զմիւս վաճառական եղբայրն զՅովհաննէս, զՄիրզախան, զբոյրն Ռուսիէն՝ և այլն. նոյնպէս « զնորարոյս վաճառականն » երևանեցի Սահմատիներան Պողոսի որդի զԳրիգորն, որ յանձն առած պարտքը հասոյց, որով առ զԻնտուրեցաւ յիշատակուի :

Թ՛ Էջն 458 զՎաստատոս կ'ընթեռնուիք. « Թիշեցէք զիս մեղաօր նօթար Մամէոս յետնորդ, որ ձեռնառե եղէ նա որ էրեւանեցի Ղլխիկեցն Աւետիս որ յիշեալ լիցիք անհղին քրիստոսի ամէն » :

Տարի մը յետոյ տպագրեց Աւետիս (1661) համառուտաւ յաւանգիրդ մի, յիշատակարանաւ. « Տպեցաւ ժամու և պարզառուժարի տեսար ի Թուին հայոց Ռճ և Ժ յերկրին Հօյանապ, ի քաղաքն Ամսթերդամ ձեւամբ Աւետիսն. աւարտեցաւ յօգոստոսի Ե՛ ի հայրապետութեան տեսան Յակօբայ սբաւդան կաթողիկոսի շուսկառայց սուրբ աթուոյն Էջմիածնի, Ո՛վ եղբարք, որք հանդիպիք զմա յիշեալիք առ քրիստոս զնօտար Մամէոսն որ հանգուցեալ է, և զկնի որոյ ըզնուստ և զանտարժան երեւանեցի Ղլխիկեցն Աւետիսն՝ զկրտսեր եղբայր Ոսկան վարդապետին » :

Թիշուած Յիսուս որդի զրոց յիշատակարանին մէջ պատմուածը կ'ամբողջանայ 1661 տարւոյն տպագրուած Մազդուսարանի յիշատակարանի խօսքերէն. որդի ինչպէս նաև յառաջաբանին զրոզն է կարապետ վարդապետ Անդրեանեցի. ուր կը յիշէ զՄարեցի Մատթէոս, նօտար ֆիլիպպոս կաթողիկոսի, « որ բազում ջանիւք և երկամբք քանգաւկել ետ և նորակերտեաց զազնիւ և զպաւտուական գիրս այս, հրամանաւ և կամօք եւրիցս երանեալ կաթողիկոսին Յակօբայ » : Տարից օրինակն ու ձևը սուեր էր Մովսէս վարդապետ : Կը յանձնէ մասնաւորաբար զյիշատակութիւն վերոյիշեալ Աւետիսի Ղլխիկեցն, որովհետև ինչպէս եղաւ, կ'ըսէ, պատմաւ որ այս

ազնուակերտն և ըզձայն տպագրարանս ընծայուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Յուշոյ վանից : Զի Մարեցին վերջին հիւանդութեանը ժամանակ իջել տուաւ զԱւետիս, և փոխ դրամ կ'ուզէր իրմէ եօթնհարիւր հնգժտասան մտուչիլ, որպէս զի պարտապանաց հասուցանէ. այն ստակով, կ'ըսէր, երկու հազար տողմոսարան և հազար երկու հարիւր Յիսուս որդի կը տպագրենք, ու անոց վաճառմանէն եղած շահը երկուքի կը բաժնեմք. մէկն ինձ և միւսն քեզ : Իսկ եթէ մեռնիմ, քոյ տեսութեան ներքև կ'ըլլայ տպարանը ու կը վճարես պարտքս և ինծի տուածդ շահսը : Աւետիս այս առաջաբովութեան յանձնառութիւն չի ցուցուց : այլ եթէ տպարանդ կ'ընծայես, ըսաւ, Էջմիածնի և սրբոյն Սարգսի, հետդ ընկեր կ'ըլլամ, ու ստակը տալով քեզ, ցորչափ կենդանի եմ կ'աշխատիմ ի տպարանի. և դրամին արդիւնքը վերոյիշեալ սրբոյն անուն կրող վանաց կը նուիրեմ. իսկ մահուընէս ետքը՝ բոլանդակը : Հաւանեցաւ Մատթէոս, և կտակաւ որոշեց որ իր մահուընէն ու երկուքին ալ պարտոց հասուցանեն ետքը՝ տպագրատունն յանձնուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի մենաստանաց : — Ինք յառաջ քան զաւարտումն տպագրութեան Յիսուս որդի զրոց վախճանեցաւ. և զոր Աւետիս, ինչպէս տեսանք, լրացընելով, ձեռք դարկաւ նաև Մազդուսի տպագրութեան : Բայց ինք բոլորովին անծանօթ և անտեղեակ ըլլալով աբուեստին, ընկեր առաւ զկարապետ վարդապետ Անդրեանեցի, ու հաւասար ջանքով և աշխատանօք հասուցին յաւարտ : Դրամի ալ կարօտութիւն քաշելով՝ ամուսինացի իռուտապաշխի որդի Միմաս անուն մէկէ մը ինն հարիւր մտուչիլ փոխ ստակ վերուցին. որով հազար երկու հարիւր օրինակ ի Յիսուս որդի զրոց կազմել տալով՝ Զմիւսնիւյ զրայէն նուրով զրկեցին յարևելս : Վերջին յիշատակարանով մ'ալ առանձինն կը յանձնեն յիշել զՆուշայեցի Եարիման և զՅովհան Միրզեանց, որոց առած եօթնհարիւր մտուչիլ դրամով կարող եղան երկու հազար և եօթնհարիւր տողմոսարան տպագրել : Իսկ ստակից փորագրին էր Ֆոնտիք քրիստօֆլ, հանձնարել զհոլանդացի արուեստաւորն, « որ և բազ-

մահնար ջանի կերպացոյց զպողոզատեայ և զպղնձի տիպ տառից » :

Յետապայ տարին (1662) Աւետիս և Կարապետ հրատարակեցին մեծագիր լատնագիրք մը (ոչ ատենի) « նորաշէն տառիւ, (ինչպէս կ'ըսեն յ'էջն 3), նոր մտտեան աստուածային պաշտաման. թուով իրիւ երեքնագրութիւն և ձեռնհաս և ամենեցուն ստանալի. » : Չոր հաւատացեալ եղեւ ի կենսարարն թուոյն Ռոյկէ յամենան սքստոսի Ռ. և Արամեան սովորն թուականութեան ՌՃԺԱին. յամոյն մտրոցայ ի Բ. . . Յաշխարհին Ֆրանկաց յերկրին յ(Աննոյ) ի քաղաքն Վիեննայում, յիշխանութեան տեղւոյս Վիլհելմոս փրինց ֆայլին, ի սպարանս որ կոչի Սուրբ Էջմիածնի, և սիրելի վկային իւրոյ օրոյն Սարգսի զօրավարին որ կառուցաւ ի նոյն Մաթէոս սարկաւազէ, և ի ժամու վախճանին նուիրեցաւ վերոգրեալ օրբարանացն : Գոյիւք և արդեամբք և հոգացողութեամբ Գլինենց Աւետսին Երեւանեցոյ՝ որ է վերակացու և թարգման սպարանիս. և մասակարարոզ և առաջնորդոզ ամենայն զործակալաց արուեստարանին » : Նոյն խօսքեր կը կրկնուին նաև ի յիշատակարանին, յորում Աւետիսի եղբայրն Ոսկան վարդապետ կը կոչուի « երկրորդ թարգմանիչ Էյոց » :

Որչափ ալ մեծ ջանքով և եռանդեամբ հետամուտ էր Աւետիս իր վրան առած ծանր և դժուարին գործոյն, բայց իր առևտրական զբաղմունք և զանազան զործանութիւնք՝ չէին ներքեր որ յարակալութեամբն յԱմսդերտամ յառաջ վարէ զայն. ու կը բռնազատուէր ուրիշի մը յանձնել : Հաւանական կ'ընէր իր նոյն ալ սակեմ հանգամանք ծանուցանելով կաթուղիկոսին, խնդրած ըլլայ անձ մը ցոյց առ իրեն՝ որուն կարենայ յանձնել վստահութեամբ գործ մը, որոյ համար այնչափ ծախք և աշխատանք եղած էր : Կաթուղիկոսին և իր ժողովոյն ընտրութիւնը ամենայարմար անձի մը վրայ ինկաւ, որ թէ սիրող էր արուեստին և գործոյն, և թէ Աւետիսի ամենամերձուոր. իր հարպաստ եղբոր Ոսկան վարդապետին :

Ոսկան երկու տարուանէ ետք՝ հրամանատար

Յակոբ կաթուղիկոսի կը նախապարտորդէ յաւրեմուս. և նախ ի Լիլոնոյ քաղաք Տոսկանայի հանդիպելով Աւետիս եղբորը, որ կը դառնար ի Չմիւսիս, անոր ձեռագրով սպարանը կ'առնու ի նմանէ, և իր աշակերտ կարապետ վարդապետի կը գրէ յԱմսդերտամ, որ մինչ իւր ժամանելը՝ ձեռքէն ետ կածին չտփ յառաջ վարէ զգործ տգորանին : Անդրիանեցին՝ որովհետև արդէն Շարականի տպագրութեան մը խորհուրդ և փափաք ունենալով՝ սկսած էր այդ ձեռնարկին կարևոր խազերու փորոգրութիւնը, փութացաւ արտել զայնուսիկ. ու ստղծոտարանի տպագրութենէն ետքը՝ ձեռք զարկաւ նաև շարականին : Երբ Ոսկան հասաւ յԱմսդերտամ, մինչ ի կարգ Համբարձման հասուցեր էր կարապետ. և շարունակեցին միաբան աշխատիլ. ի նմին ժամանակի պատրաստութիւն տեսնել Աստուածաշունչ գրոց տպագրութեան, զոր միտք ունէին հրատարակել : Ուստի Ոսկան ետևէ եղաւ առ զանդակել Աստուածաշունչի խորագրութեանց համար նօտարգիր տառեր, և փութով երեք ամսուան մէջ աւարտելով, փորձի համար շարագրել առևտի Շարականի, սկսելով մարտիրոսաց կարգէն :

Ըսինք թէ Ոսկան վարդապետ ի Չմիւսնիոյ զործը ըստ կարի յառաջ վարէ մինչև իւր ժամանումը յԱմսդերտամ. և թէ նա բաց ի շարականէ՝ ստղծոտարան մ'ալ տպագրեց : Այս վերջին գրոց մէկ պակասաւոր օրինակը հասած է ձեռուրնիս. որոյ ճակատը կը պակօթի, և յիշատակարանէն կրնանք հետեւեալ տեղեկութիւններն քողել : Քրիստոսի 1664 թուականին եղած է այդ տպագրութիւն. « նեյ տպարանում որ հաստատեալ եղի ի նախանշանակեալ Մատթէոսէ տարկաւագէ. յերկրիս Հոլլանտիոս ի քաղաքիս յԱմսդերտամի. որ կոչի աշխարհ Ֆրամենկի. սպասաւորութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անիմաստ և անպիտան կարապետի Անդրիանեցոյ և բանի սպասուորի, աշակերտի մեծի բարունապետի տեսուն Ոսկանի երևանեցոյ » :

Ոսկան կը հասնի յԱմսդերտամ, ու 1666ին սկիզբն կ'առնու իր բուն տպագրական գործու-

նէութիւնն : Նախ ամենակարեօր գրքի մը հրատարակութեան ձեռք կը զարնէ, որ թէ պէտ փոքր քանակաւ՝ բայց ազգին նոյն միջոցի գտնուած վիրքին համար անհրաժեշտ և մեծապէս հարկաւոր գրքոյի մը. այլուրեքնից ու ֆրիստոնէական վարդապետութեան. և որոց ձակասը գրուած է. « Հանդերձ Աստուծով : Գիրք այլուրեքնից յազապս նորեկ արգայոց՝ և մանկանց անկրթից. նաև արանց գետ եւս ոչ տեսչոց. որոց լիցի օժանդակ հասանելի ի կատարումն կրթութեան. և ի վարժումն ճակատէս ընթերցողութեան : Յօրինեալ ներտպարանում սրբոյ Էջմիածնի. և սրբոյն Սարգսի զօրավարի : Յամբողջրտամ քաղաքի : ի ներթուում փրկչին 1666 . իսկ Հայոց ՌճժԵ յունվարի Գ » : Զունի

յիշատակարան, միայն ի վերջ քրիստոնէական վարդապետութեանն, զոր հրատարակիչն կ'անուանէ « Յաղազս մանկանց առ ի կրթութիւն. և վարժումն ի կրօնս քրիստոնէութեան », հետեւեալ քանի մի տողերը կան. « Շարադրեցաւ բանս հաւատոյ սակս վարժութեան տնասից. ի թուի ֆրկչի 1666 . իսկ ի մերումն թուոյ ՌճժԵ ամենանն նոյեմբերի. որոյ էին աւուրք քսանեւհինգ : յԱմադերտամ քաղաքի, ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի » : Զտոնց ձեռք ընտիր, անվթար և անսխալ տպագրութիւնն. մէկէն կ'իմացուէր թէ հըմաւտ, կարող ա իր զործէն հասկըցող անձի մը կառավարութեան և տեսչութեան ներքոյ էր Ամադերտամի տպարանը :

Շարայարեւի

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԱՆՏՐԻ ԶԱՐԵԻԵՍՍ

(Տես յէջ 7)

ԼԸ

Գարձ յերևան. — Վերջին անգը ընդ Երասխ. — Շահրիար գիւղը. — Արմասիւր. — Խուլ-Ֆիլիսէ. — Մոտքը կասօք յերևան :

16. Յուլիս. — Եւ անհ հրածեշտ տալով Երասխի ափանց՝ կը բռնենք Երևանու ճամբան, մեր ծրագիրը կէտ առ կէտ լննցընելով : Վերջին անգամ, գահութիւն Աստուծոյ, կ'անցնինք նշանաւոր գետը, ճիշդ այն տեղէն՝ ուր ութ օր յառաջ խղզուեցաւ Երևանցի վաժապետ մը՝ ուրիշ ութ ձիաւորաց հետ անցնելու առեն :

Այսուհետև պիտի երթանք ձախակողմեան փոստերէն, աշխկողմը թողլով Սուրմալու գիւղը, որուն գեղեցիկ ընկաղեքնիները դէմ կը դնեն յորութեան՝ շնորհիւ Երասխի առատ ջրոց, որով կ'ուզենք միշտ տեղացիք :

Պ. Շանսար սրոշեր էր որ քիչ մը յոգ-

նութիւն առնլու համար կենայինք այն իրիկուն ի Շահրիար : Առջինիս ձգուած է երկայն, հարթ, միօրինակ ճամբան ցիրուցան մարդերով մեծ զաշտապետնոյ մը վրայ : Այս կանաչ կէտերէն մին ալ է Շահրիար, բայց որչափ որ մենք յառաջ կ'երթանք, կարծես նա կը հեռանայ : Վից ժամ քայելէ վերջ՝ օթևանը կը հասնինք, և մեր վրանները կը պարզուին գեղեցիկ շէնքի մը բակին մէջ, որուն տէրերը բացակայ են :

Շահրիար գիւղը ընդարձակ պարտէզ մ'է ինամամլ ոռոգուած : Զետեղուած է 980 մետր բարձրութեան վրայ, և ունի գրեթէ երկու հարիւր հայ ընտանիքներ, որոնք անուանի